



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

19.03.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2020/29

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային
կենտրոն» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի
ներկայացուցիչ՝ Լ. Փանոյան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/30» ծածկագրով գնանշման հարցում, աշտորոշման սարքերի
ծեղքերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև
Ընկերություն) կողմից 18.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից
փաստաթղթերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին չեղյալ հայտարարել «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.02.2020թ.-ին:

19.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/29 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

25.02.2020թ.-ին, 06.03.2020թ.-ին և 19.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.03.2020թ.-ին:

2. «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն 18.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2020 թվականի փետրվարի 12-ին «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակվել է ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/30 ծածկագրով գնանշման հարցման հրավեր: Հրավերով սահմանվում է, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը (19.02.2020թ.) ժամը 11:00-ին:

Նույն ապրանքների ձեռքբերման համար արդեն իսկ հունվարի 20-ին հայտարարվել էր ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, որը այնուհետև բողոքարկվել էր «Սիոն» ՍՊ ընկերության կողմից (ԳԲՔԱ-ՆԳ-2020/13) և բողոք քննող

անձի կողմից որոշում էր կայացվել պարտավորեցնել Պատվիրատուին չեղյալ հայտարարել գնանշման հարցման հրավերը:

Մեր ընկերությունը դեռ առաջին հայտարարության ժամանակ հետաքրքրված էր այս մրցույթին մասնակցությամբ, սակայն հրավերի վերլուծության արդյունքում փաստացի պարզ էր դարձել, որ մրցույթով պահանջվող ապրանքներից առնվազն 1 չափաբաժնի երկէներգետիկ ռենտգեն դենսիտոմետրիկ համակարգի տեխնիկական բնութագիրը կազմված է ՀՀ Գնումների մասին օրենքի և գնումների գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերի խախտմամբ:

Փաստենք, որ անկախ բողոքարկումից, ՈԻԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17 հրավերով նախատեսված հայտերի բացումը տեղի է ունեցել սահմանված ժամկետում: Հրավերով մասնակցության հայտ ներկայացրել է միայն մեկ ընկերություն, որի ներկայացրած հավելված 1.1-ից պարզ է դառնում, որ 1-ին չափաբաժնով առաջարկվող երկէներգետիկ ռենտգեն դենսիտոմետրիկ համակարգի տեխնիկական բնութագիրը տառացիորեն կրկնում է գնանշման հարցման հրավերով պահանջվող տեխնիկական բնութագիրը, առանց որևէ փոփոխության և շեղման:

Մրցույթի բողոքարկումից հետո կարծում էինք, որ Պատվիրատուն կվերանայի ոչ միայն բողոքի պահանջով նշված ռուսերեն լեզվով հրավերի տրամադրման հարցը, այլ նաև տեխնիկական բնութագրերը: Սակայն ՈԻԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/30 ծածկագրով գնանշման հարցման հրավերի վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ տեխնիկական բնութագրում որևէ էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Մասնավորապես, հրավերով սահմանվում է, որ հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Համաձայն ՀՀ կառավարության առ 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն որոշման (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526 Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1454-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ) 5-րդ կետի, Պարվիրատուն պարտավոր է.

- 5) 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:»:

Հայտարարված մրցույթի տեխնիկական բնութագիրը կրկնակի անգամ մեր կողմից թարգմանվել է փարբեր լեզուներով, որովհետև նույնիսկ այս դեպքում Պարվիրատուն ապահովել է միայն ռուսերեն լեզվով թարգմանության փաստացի առկայությունը, առանց գնահատելու դրա հասկանալի կամ ճիշտ թարգմանված լինել-չլինելը, և ուղարկվել է երկէներգետիկ ռենտգեն դենսիտոմետրիկ համակարգ արտադրող բոլոր ընկերություններին, որոնցից ստացել ենք պատասխաններ, որ նշված տեխնիկական բնութագրին ամբողջապես համապատասխանում են միայն մեկ արտադրողի՝ Hologic ընկերության կողմից արտադրված սարքերը: Տեխնիկական բնութագրերով մասնակցությունը սահմանափակվել է նաև FDA որակի վկայական պահանջելու միջոցով, քանի որ երկէներգետիկ ոսկրային դենսիտոմետրերի համար FDA հավաստագրում անցել են միայն Hologic և GE Medical Systems ընկերությունները: Այսինքն, այս պահանջով սահմանափակվում է բոլոր մնացած արտադրողների մասնակցությունը, բացի GE Medical Systems-ից. իսկ վերջինիս որևէ արտագրանք չի համապատասխանում այլ պարամետրերին:

Այսպես օրինակ, նույնիսկ եթե համեմատենք GE Medical Systems ընկերության արտադրության (որը համարվում է նմանադիպ սարքավորումների առաջատար արտադրողներից մեկը աշխարհում) ամենաբարձր դասի մոդելը՝ Lunar iDXA-ն շար կարևոր տեխնիկական բնութագրերով զգալի առավելություններ ունի պահանջվող տեխնոլոգիայի համեմատ, բայց չի համապատասխանում, օրինակ, «պացիենտի

պահանջվող քաշը» ցուցանիշին: Պահանջվում է ոչ պակաս, քան 225, արտադրողը հաստատում է, որ կարող է ապահովել 207 կգ բաշով պացիենտների անվտանգ հեղուկացումը: Կամ, օրինակ, ռենտգենյան խողովակի հզորություն պարամետրի պահանջը ոչ պակաս, քան 10կՎա-ն է, այն դեպքում, երբ բոլոր մնացած արտադրողներն առաջարկում են 2,5կՎա-անոց ռենտգենյան խողովակներ: Այսպիսի օրինակները բազմաթիվ են:

Կարծում ենք, որ այս տեխնիկական բնութագիրը հակասում է գնումների գործընթացը կարգավորող իրավական նորմերին ու ակտերին:»:

Ելնելով վերոգրյալից, «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին չեղյալ հայտարարել «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

3. «Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 19.02.2020թ.-ի գրությամբ դիմել է «Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 18.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 25.02.2020թ.-ին հրավիրված նիստին՝ ներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում:

Պատվիրատուն 25.02.2020թ.-ի թիվ 01/10-30 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Կենտրոնի կարիքների հանար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու ախտորոշման սարքեր, ինչի նպատակով կազմակերպվել է ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17 ծածկագրով գնանշման հարցում: «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի նշած փաստարկը, որ վերոնշյալ հրավերը արդեն իսկ բողոքարկվել է առհասարակ կապ չունի ներկա բողոքի առարկայի հետ: Ավելին՝ Ընկերությունը նշում է նաև, որ առաջին ընթացակարգի ժամանակ ևս հետաքրքրված է եղել, սակայն Ընկերությանը չէր կարող մինչև հայտեր ներկայացնելու

օրը իմանալ, որ հրավերը բողոքարկվել է, քանի որ նույնիսկ որպես Կողմ հանդիսացող Պատվիրատու՝ Կենտրոնին բողոքի մասին ծանուցվել, ինչպես նաև gnumner.am կայքում հրապարակվել է հենց հայտերի բացման օրը, քանի որ մեկ օր առաջ է բողոք ներկայացվել: Հետևաբար, եթե ենթադրյալ մասնակիցը, ինչպես Ընկերությունն է նշում, նկատելի բացահայտ խախտումներ հրավերում, որի դրույթները կհակասեին «Գնումների մասին» ՀՀ օրենքին և գնումների գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերին և հետաքրքրված լինել, ապա անտրամաբանական ենք համարում չբողոքարկելը:

Նշենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցները կարող էին հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում թե ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17 ծածկագրով և թե ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/30 ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ժամանակ, ինչը հնարավորություն կտար Հրավերում կատարել անհրաժեշտ փոփոխություններ, և չէր երկարաձգվի ընթացակարգը: Քանի որ տվյալ սարքերի ձեռքբերումը անմիջականորեն կապված է հիվանդի հետազոտությունների իրականացման հետ և ունի կարևոր նշանակություն Կենտրոնի համար, մեր կողմից առաջին բողոքարկման ժամանակ գրություն (կցվում է) է ուղարկվել բողոք քննող անձին, որպեսզի հնարավորություն տրվի մինչև բողոքարկման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը չկայացած հայտարարել ընթացակարգը և վերահայտարարել այն: Ստացվում է, որ 2 բողոքի դեպքում էլ բողոք ներկայացվել է վերջին օրվա ընթացքում:

Ընկերությունը նշում է, որ ընթացակարգի առաջին չափաբաժնի՝ երկէներգետիկ ռենտգեն դենսիտոմետրիկ համակարգի մասով տեխնիկական բնութագիրը ուղարկվել է երկէներգետիկ ռենտգեն դենսիտոմետրիկ համակարգ արտադրող այլ ընկերություններին, որոնք նշել են, որ Հրավերի տեխնիկական բնութագրին կարող են համապատասխանել միայն Hologic ընկերության կողմից արտադրված սարքերը, սակայն բողոքի մեջ բացակայում էր վերոնշյալ համակարգ արտադրող ընկերությունների գրավոր որևէ հավաստում: Հետևաբար, պահանջում ենք այդ պատասխանների գրավոր հավաստումը:

Ընկերությունը հղում է փախս Lunar iDXA համակարգին, որի հետ կապված ունենք հետևյալ նկատառումները.

- Դենսիտոմետրիկ համակարգի 2,5 կվԱ խողովակի պահանջվող հոսանքի ուժը հենց միջին աշխատանքային հիմնական մակարդակն է, որը բավարարվում է շար արտադրողների կողմից, նաև նշված Lunar iDXA համակարգի կողմից:

• Նշված տեխնիկական պարամետրերի բացարձակ մեծամասնությունը ապահովում են շուկայում առկա շատ համակարգերի կողմից, նաև նշված Lunar iDXA համակարգի կողմից, իսկ այնպիսի պարամետր ինչպիսին պացիենտի մաքսիմալ քաշն է, կարող է դիտվել որպես ոչ էական շեղում պահանջվող պարամետրերից, և գնահատող հանձնաժողովի կողմից դիտվել որպես համարժեք:»:

4. ԳԲԲԱ-LO-2020/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ախտորոշման սարքերի ձեռքբերման նպատակով 12.02.2020թ.-ին հայտարարվել է «ՌԻԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով՝

- 1-ին չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Երկէներգետիկ ռենտգեն դենսիտոմետրիկ համակարգ ոսկրերի հետազոտման համար, ամբողջ մարմնի հետազոտման ապահովմամբ, աշխատանքը DEXA(DXA) տեխնոլոգիայի հիման վրա, սկանավորման բնութագիր, անընդհատ երկէներգետիկ ռենտգեն աբսորբցիոմետրիայի առկայություն (DEXA, DXA), ավտոմատ ստուգաչափման իրականացում ամեն հետազոտությունից առաջ, արդյունքների վերարտադրման ճշգրտության սխալը ոչ ավել, քան՝ 1%, որոշվող պարամետրեր, ոսկրային հյուսվածքի միներալային խտության որոշում (BMD) գրամ/սմ², միներալային ոսկրային մասսայի որոշում (BMC) գրամ, T և Z ինդեքսների որոշում արդյունքների տոկոսային համեմատում մաքսիմալ նորմալ ոսկրային մասսայի արժեքների հետ արդյունքների տոկոսային համեմատում տարիքային նորմայի արժեքների հետ, ոսկրային մասսայի փոփոխության դինամիկա, փոփոխության տոկոսային որոշմամբ, ամբողջ մարմնի կոմպոզիցիոն կառուցվածքային արժեքներ (ոսկրային, մկանային, ճարպային), սկանավորման մաքսիմալ երկարությունը ոչ պակաս, քան՝ 195 սմ, սկանավորման մաքսիմալ լայնքը ոչ պակաս, քան՝ 65 սմ, պացիենտի առավելագույն քաշը ոչ պակաս, քան՝ 225 կգ, պացիենտի հասակից և քաշից կախված սկանավորման ռեժիմի

ընտրություն, մեկ սկանավորման տևողությունը ստանդարտ հետազոտությունների համար՝ ողնաշար առաջահետին պրոյեկցիայով, ոչ ավել, քան՝ 30վրկ, ազդրոսկրի պրոքսիմալ հատված, ոչ ավել, քան՝ 30վրկ, նախաբազուկ, ոչ ավել, քան՝ 30վրկ, ողնաշար կողային պրոյեկցիայով, ոչ ավել, քան՝ 30վրկ, ամբողջ մարմնի սկանավորում ոչ ավել, քան՝ 5 րոպե: Ռենգեն խողովակ՝ խողովակի մաքսիմալ հոսանքի ուժը, ոչ պակաս, քան 10մԱ, խողովակի միջին աշխատանքային հոսանքի ուժը, ոչ պակաս, քան 2,5մԱ, ռենտգեն ճառագայթի փնջի տեսակը-հովհարածն: Անընդհատ երկէներգետիկ ռենտգեն արտաբերողների համակարգի (DEXA, DXA), էներգիայի տարաբաժանում, ճառագայթման էներգիայի մակարդակը պուլսային երկէներգետիկ, ցածր էներգիայի մակարդակը, ոչ ավել, քան՝ 100 կՎա, բարձր էներգիայի մակարդակը, ոչ պակաս, քան՝ 140 կՎա, պացիենտի ճառագայթման դոզան ստանդարտ հետազոտությունների ժամանակ, ողնաշար առաջահետին պրոյեկցիայով, ոչ ավել, քան՝ 40մկՋ, ողնաշար կողային պրոյեկցիայով, ոչ ավել, քան՝ 40մկՋ, ազդրոսկրի պրոքսիմալ հատված, ոչ ավել, քան՝ 10մկՋ, նախաբազուկ, ոչ ավել, քան՝ 10մկՋ, ամբողջ մարմնի սկանավորում ոչ ավել, քան՝ 15 մկՋ: Թվային դետեկտոր՝ դետեկտորի մատրիցայում էլեմենտների քանակը ոչ պակաս, քան՝ 64: Ծրագրային ապահովում՝ օգտագործման ծրագրային հարթակը պետք է լինի համատեղելի Windows 7 և ավելի նոր ծրագրային ապահովման հետ: Ամենօրյա ստուգաչափման իրականացում ստացված տվյալների տպիչով տպման հնարավորությամբ: ԱՀԿ համապատասխան T և Z կրիտերիաների պոպուլյացիոն նորմաների տվյալների բազայի առկայություն: Օգտագործողի մի քանի տվյալների բազայի ստեղծման հնարավորություն: Տվյալների բազայի կառավարում, մի քանի կրիտերիաներով որոնման հնարավորությամբ: Հետազոտությունների տվյալների անալիզ և վերամշակում ձեռքով և ավտոմատ եղանակով: Պացիենտի դիրքի կարգավորում հետազոտության ժամանակ՝ առանց պացիենտի տեղաշարժման: Մի քանի անատոմիական զոնաների հետազոտման հնարավորության մեկ հետազոտության ընթացքում պատկերի պարամետրերի փոփոխման հնարավորություն, հետաքրքրության զոնային փոփոխություն՝ ձեռքով և ավտոմատ ընտրության եղանակով DICOM ապահովման առկայություն, պացիենտների տվյալների և պատասխանի ընդունման, ուղարկման և տպելու համար: Ախտորոշման ծրագրային ապահովում: Ողնաշար առաջահետին պրոյեկցիայով հետազոտման առկայություն, ողնաշար կողային պրոյեկցիայով հետազոտման առկայություն, ազդրոսկրի պրոքսիմալ հատվածի հետազոտման առկայություն: Երկու ազդրոսկրերի պրոքսիմալ հատվածների հետազոտում մեկ սկանավորման ընթացքում: Ողնաշարի և ազդրոսկրի պրոքսիմալ հատվածների

հետազոտում մեկ սկանավորման ընթացքում ազդրոսկրի կառուցվածքային անալիզի ծրագրային ապահովում, ազդրոսկրի վզիկի կոտրվածքի կանխատեսման հնարավորությամբ: 10 տարվա ընթացքում օստեպորոտիկ կոտրվածքների ռիսկի հավանականության գնահատման ծրագրային ապահովում: Նախաբազկի ոսկրերի հետազոտման առկայություն: Ամբողջ մարմնի միներալային խտության և կառուցվածքային բաղադրիչների հետազոտություն, ներառյալ ճարպային և մկանային հյուսվածքի անալիզներ և հետևյալ հաշվարկները՝ մարմնի զանգվածի ինդեքս, ճարպային զանգվածի ինդեքս, Android/Gynoid հարաբերակցություն, որովայնային հատվածի վիսցերալ ճարպի գնահատում: Կրծքային և գոտկային ողերի ավտոմատ մորֆոմետրիա, սկոլիոզի անկայն ավտոմատ հաշվարկ, պեդիատրիկ չափումների և հետազոտությունների առկայություն, ողնաշար առաջահետին պրոյեկցիայով, ազդրոսկրի պրոքսիմալ հատված, նախաբազուկ, ամբողջ մարմնի միներալային խտության և կառուցվածքային բաղադրիչների: Օրթոպեդիկ ծրագրային ապահովման առկայություն իմպլանտի շուրջ ոսկրի վիճակի գնահատման համար, մետաղական պրոտեզների և այլ մետաղական մասերի ավտոմատ դուրս բերման համար հետաքրքրության զոնայից ազդրոսկրի հետազոտման ժամանակ: Ինֆորմացիայի վերամշակման և պահպանման համակարգ: Համակարգիչ հետևյալ մինիմալ հնարավորություններով՝ Dual Core Dual Core 2,6 GHz, 2 GB RAM, HD 1TB, DVD RAM & DVD±R/RW & CDRW, LAN: Գունավոր մոնիտոր, ոչ պակաս, քան՝ 19, գունավոր տպիչի առկայություն, աքսեսուարներ, համակարգի տեղադրման և միացման համար համապատասխան դետալների առկայություն, օգտագործման ձեռնարկ: Համակարգի տեղադրում, կարգավորում, միացում և մասնագետի ուսուցում տեղում: Երաշխիքային սպասարկում, առնվազն՝ 12 ամիս: Ընդհանուր պահանջներ՝ էլեկտրասնուցումը ստանդարտ ցանցից 230Վ/250Վ, CE, FDA սերտիֆիկատների առկայություն:

- 2-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Կիսաավտոմատ ռոտացիոն միկրոտոմ, նմուշի հատման հաստության տիրույթ՝ 0.25 μm -ից մինչև 100 μm տիրույթ, կամ ավել: Արժեք ոչ ավել քան 0,5 μm քայլով. 0,25 – 5 μm տիրույթում, ոչ ավել քան 1 μm քայլով. 5 – 20 μm տիրույթում, ոչ ավել քան 5 μm քայլով. 20 – 60 μm տիրույթում, ոչ ավել քան 10 μm քայլով. 60 – 100 μm տիրույթում: Նմուշի կարգավորման հատման տիրույթ՝ 0- 600 μm տիրույթում, կամ ավել, ոչ ավել քան 5 μm քայլով. 5 – 30 μm տիրույթում, ոչ ավել քան 10 μm քայլով. 30 – 100 μm տիրույթում, ոչ ավել քան 50 μm քայլով. 100 – 500 μm տիրույթում: Նմուշի դիրքը՝ հորիզոնական՝ $\pm 8^\circ$, ուղղահայաց՝ $\pm 8^\circ$: Սնուցման լարումը՝ 100 / 120 / 230 / 240 Վ: Սնուցման հոսանքի հաճախականությունը 50/60

Հց: Քաշը՝ ոչ ավել քան 35 կգ: Շեղք լայն և բարակ շեղքերից օգտվելու հնարավորություն: Երաշխիք 1 տարի: Երաշխիքային ժամկետի ընթացքում սարքի աշխատանքի խափանման դեպքում Գնորդի կանչը (ծանուցումը) սատանլու պահից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում Վաճառողը կամ Վաճառողի կողմից լիազորված անձը պարտավոր է իրականացնել սարքի դիագնոստիկան՝ սարքի աշխատանքի խափանման պատճառները պարզելու համար: Սարքի աշխատանքի խափանման պատճառները պարզելուց հետո Վաճառողը կամ Վաճառողի կողմից լիազորված անձը Գնորդի հետ համաձայնեցված ժամկետներում վերացնում է սարքի աշխատանքում առակա խափանումը: Վաճառողը պետք է ունենա արտադրողի կողմից սպասարկում իրականացնելու հավաստագիր:

www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ախտորոշման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել 3 (երեք) մասնակիցներ՝ որոնցից 1-ին չափաբաժնի համար հայտ է ներկայացրել մեկ մասնակից, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ երկու մասնակից:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 18.02.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ախտորոշման սարքերի ձեռքբերման նպատակով 12.02.2020թ.-ին հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊԶԲ-20/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով՝

- 1-ին չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Երկէներգետիկ ռենտգեն դենսիտոմետրիկ համակարգ ոսկրերի հետազոտման համար, ամբողջ մարմնի հետազոտման ապահովմամբ, աշխատանքը DEXA(DXA) տեխնոլոգիայի հիման վրա, սկանավորման բնութագիր, անընդհատ երկէներգետիկ ռենտգեն արտորբցիոմետրիայի առկայություն (DEXA, DXA), ավտոմատ ստուգաչափման իրականացում ամեն հետազոտությունից առաջ, արդյունքների վերարտադրման ճշգրտության սխալը ոչ ավել, քան՝ 1%, որոշվող պարամետրեր, ոսկրային հյուսվածքի միներալային խտության որոշում (BMD) գրամ/սմ², միներալային ոսկրային մասսայի որոշում (BMC) գրամ, T և Z ինդեքսների որոշում արդյունքների տոկոսային համեմատում մաքսիմալ նորմալ ոսկրային մասսայի արժեքների հետ արդյունքների տոկոսային համեմատում տարիքային նորմայի արժեքների հետ, ոսկրային մասսայի փոփոխության դինամիկա, փոփոխության տոկոսային որոշմամբ, ամբողջ մարմնի կոմպոզիցիոն կառուցվածքային արժեքներ (ոսկրային, մկանային, ճարպային), սկանավորման մաքսիմալ երկարությունը ոչ պակաս, քան՝ 195 սմ, սկանավորման մաքսիմալ լայնքը ոչ պակաս, քան՝ 65 սմ, պացիենտի առավելագույն քաշը ոչ պակաս, քան՝ 225 կգ, պացիենտի հասակից և քաշից կախված սկանավորման ռեժիմի ընտրություն, մեկ սկանավորման տևողությունը ստանդարտ հետազոտությունների համար՝ ողնաշար առաջահետին պրոյեկցիայով, ոչ ավել, քան՝ 30վրկ, ազդրոսկրի պրոքսիմալ հատված, ոչ ավել, քան՝ 30վրկ, նախաբազուկ, ոչ ավել, քան՝ 30վրկ, ողնաշար կողային պրոյեկցիայով, ոչ ավել, քան՝ 30վրկ, ամբողջ մարմնի սկանավորում ոչ ավել, քան՝ 5 րոպե: Ռենգեն խողովակ՝ խողովակի մաքսիմալ հոսանքի ուժը, ոչ պակաս, քան 10մԱ, խողովակի միջին աշխատանքային հոսանքի ուժը, ոչ պակաս, քան 2,5մԱ, ռենտգեն ճառագայթի փնջի տեսակը-հովհարածև: Անընդհատ երկէներգետիկ ռենտգեն արտորբցիոմետրիայի առկայություն (DEXA, DXA), էներգիայի տարաբաժանում, ճառագայթման էներգիայի մակարդակը պուլսային երկէներգետիկ, ցածր էներգիայի մակարդակը, ոչ ավել, քան՝ 100 կՎա, բարձր էներգիայի մակարդակը, ոչ պակաս, քան՝ 140 կՎա, պացիենտի

ճառագայթման դոզան ստանդարտ հետազոտությունների ժամանակ, ողնաշար առաջահետին պրոյեկցիայով, ոչ ավել, քան՝ 40մկՋվ, ողնաշար կողային պրոյեկցիայով, ոչ ավել, քան՝ 40մկՋվ, ազդրոսկրի պրոքսիմալ հատված, ոչ ավել, քան՝ 10մկՋվ, նախաբազուկ, ոչ ավել, քան՝ 10մկՋվ, ամբողջ մարմնի սկանավորում ոչ ավել, քան՝ 15 մկՋվ: Թվային դետեկտոր՝ դետեկտորի մատրիցայում էլեմենտների քանակը ոչ պակաս, քան՝ 64: Ծրագրային ապահովում՝ օգտագործման ծրագրային հարթակը պետք է լինի համատեղելի Windows 7 և ավելի նոր ծրագրային ապահովման հետ: Ամենօրյա ստուգաչափման իրականացում ստացված տվյալների տպիչով տպման հնարավորությամբ: ԱՀԿ համապատասխան T և Z կրիտերիաների պոպուլյացիոն նորմաների տվյալների բազայի առկայություն: Օգտագործողի մի քանի տվյալների բազայի ստեղծման հնարավորություն: Տվյալների բազայի կառավարում, մի քանի կրիտերիաներով որոնման հնարավորությամբ: Հետազոտությունների տվյալների անալիզ և վերամշակում ձեռքով և ավտոմատ եղանակով: Պացիենտի դիրքի կարգավորում հետազոտության ժամանակ՝ առանց պացիենտի տեղաշարժման: Մի քանի անատոմիական զոնաների հետազոտման հնարավորության մեկ հետազոտության ընթացքում պատկերի պարամետրերի փոփոխման հնարավորություն, հետաքրքրության զոնային փոփոխություն՝ ձեռքով և ավտոմատ ընտրության եղանակով DICOM ապահովման առկայություն, պացիենտների տվյալների և պատասխանի ընդունման, ուղարկման և տպելու համար: Ախտորոշման ծրագրային ապահովում: Ողնաշար առաջահետին պրոյեկցիայով հետազոտման առկայություն, ողնաշար կողային պրոյեկցիայով հետազոտման առկայություն, ազդրոսկրի պրոքսիմալ հատվածի հետազոտման առկայություն: Երկու ազդրոսկրերի պրոքսիմալ հատվածների հետազոտում մեկ սկանավորման ընթացքում: Ողնաշարի և ազդրոսկրի պրոքսիմալ հատվածների հետազոտում մեկ սկանավորման ընթացքում ազդրոսկրի կառուցվածքային անալիզի ծրագրային ապահովում, ազդրոսկրի վզիկի կոտրվածքի կանխատեսման հնարավորությամբ: 10 տարվա ընթացքում օստեպորոտիկ կոտրվածքների ռիսկի հավանականության գնահատման ծրագրային ապահովում: Նախաբազկի ոսկրերի հետազոտման առկայություն: Ամբողջ մարմնի միներալային խտության և կառուցվածքային բաղադրիչների հետազոտություն, ներառյալ ճարպային և մկանային հյուսվածքի անալիզներ և հետևյալ հաշվարկները՝ մարմնի զանգվածի ինդեքս, ճարպային զանգվածի ինդեքս, Android/Gynoid հարաբերակցություն, որովայնային հատվածի վիսցերալ ճարպի գնահատում: Կրծքային և գոտկային ողերի ավտոմատ մորֆոմետրիա, սկոլիոզի անկայն ավտոմատ հաշվարկ, պեդիատրիկ չափումների և հետազոտությունների առկայություն,

ողնաշար առաջահետին պրոյեկցիայով, ազդրոսկրի պրոքսիմալ հատված, նախաբազուկ, ամբողջ մարմնի միներալային խտության և կառուցվածքային բաղադրիչների: Օրթոպեդիկ ծրագրային ապահովման առկայություն ինվալանտի շուրջ ոսկրի վիճակի գնահատման համար, մետաղական պրոտեզների և այլ մետաղական մասերի ավտոմատ դուրս բերման համար հետաքրքրության գոնայից ազդրոսկրի հետազոտման ժամանակ: Ինֆորմացիայի վերամշակման և պահպանման համակարգ: Համակարգիչ հետևյալ մինիմալ հնարավորություններով՝ Dual Core Dual Core 2,6 GHz, 2 GB RAM, HD 1TB, DVD RAM & DVD±R/RW & CDRW, LAN: Գունավոր մոնիտոր, ոչ պակաս, քան՝ 19, գունավոր տպիչի առկայություն, արքեսուարներ, համակարգի տեղադրման և միացման համար համապատասխան դետալների առկայություն, օգտագործման ձեռնարկ: Համակարգի տեղադրում, կարգավորում, միացում և մասնագետի ուսուցում տեղում: Երաշխիքային սպասարկում, առնվազն՝ 12 ամիս: Ընդհանուր պահանջներ՝ էլեկտրասնուցումը ստանդարտ ցանցից 230Վ/250Հգ, CE, FDA սերտիֆիկատների առկայություն:

- 2-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ Կիսավտոմատ ռոտացիոն միկրոտոմ, նմուշի հատման հաստության տիրույթ՝ 0.25 μm -ից մինչև 100 μm տիրույթ, կամ ավել: Արժեք ոչ ավել քան 0,5 μm քայլով. 0,25 – 5 μm տիրույթում, ոչ ավել քան 1 μm քայլով. 5 – 20 μm տիրույթում, ոչ ավել քան 5 μm քայլով. 20 – 60 μm տիրույթում, ոչ ավել քան 10 μm քայլով. 60 – 100 μm տիրույթում: Նմուշի կարգավորման հատման տիրույթ՝ 0- 600 μm տիրույթում, կամ ավել, ոչ ավել քան 5 μm քայլով. 5 – 30 μm տիրույթում, ոչ ավել քան 10 μm քայլով. 30 – 100 μm տիրույթում, ոչ ավել քան 50 μm քայլով. 100 – 500 μm տիրույթում: Նմուշի դիրքը՝ հորիզոնական՝ $\pm 8^\circ$, ուղղահայաց՝ $\pm 8^\circ$: Սնուցան լարումը՝ 100 / 120 / 230 / 240 Վ: Սնուցման հոսանքի հաճախականությունը 50/60 Հգ: Քաշը՝ ոչ ավել քան 35 կգ: Շեղբ լայն և բարակ շեղբերից օգտվելու հնարավորություն: Երաշխիք 1 տարի: Երաշխիքային ժամկետի ընթացքում սարքի աշխատանքի խափանման դեպքում Գնորդի կանչը (ծանուցումը) սատանլու պահից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում Վաճառողը կամ Վաճառողի կողմից լիազորված անձը պարտավոր է իրականացնել սարքի դիագնոստիկան՝ սարքի աշխատանքի խափանման պատճառները պարզելու համար: Սարքի աշխատանքի խափանման պատճառները պարզելուց հետո Վաճառողը կամ Վաճառողի կողմից լիազորված անձը Գնորդի հետ համաձայնեցված ժամկետներում վերացնում է սարքի աշխատանքում առակա խափանումը: Վաճառողը պետք է ունենա արտադրողի կողմից սպասարկում իրականացնելու հավաստագիր:

www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ախտորոշման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել 3 (երեք) մասնակիցներ՝ որոնցից 1-ին չափաբաժնի համար հայտ է ներկայացրել մեկ մասնակից, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ երկու մասնակից:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և

համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ախտորոշման սարքերի ձեռքբերման նպատակով 12.02.2020թ.-ին հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն նման բնութագրեր սահմանելով ապահովել է մրցակցության հավասար պայմաններ՝ հնարավոր մասնակիցների համար, որի արդյունքում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ գնումների գործընթացում չի առաջացվել: Բացի այդ նման բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը, որոնց էլ մասնակցության հայտ են ներկայացրել 3 (երեք) մասնակիցներ:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել

միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու գրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու փաստը, այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Ինչ վերաբերում է Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած միայն 1 (մեկ) մասնակից լինելու հանգամանքին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ միայն մեկ մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքը չի կարող գնահատվել, որպես այնպիսի էական նշանակություն ունեցող փաստ, ըստ որի կարելի կլիներ արձանագրել հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ չափափոխվելու հանգամանքը, ըստ այդմ էլ՝ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի դրույթների խախտումը: Օրենքի նշված դրույթի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ գնման առարկայի բնութագիրը պետք է ապահովի ոչ թե մեկից ավելի հայտի ներկայացման պարտադիր պայման, այլ պետք է ապահովի հնարավոր մասնակիցների հայտ ներկայացնելու հնարավորություն:

Սույն դեպքում Ընկերությունը, բողոքով 1-ին չափաբաժնի մասով նշելով միայն մեկ մասնակցի հայտ ներկայացնելու հանգամանքը, որպես գնման առարկայի բնութագրի խտրական լինելու փաստ, չի ապացուցել հնարավոր մասնակիցների մասնակցության անհնարինությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ Ընթացակարգի պահանջները հիմնավոր են և չեն

սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից ներկայացված բողոքի առարկություններով հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության ոտնահարումը և գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների առկայությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել տեխնիկական բնութագրերով սահմանված պայմանների փոփոխմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 18.02.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/29 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆԶ՝**



ԼԵՎՈՆ ՕՇԱՆՅԱՆ